գալուստ պատասխանի գրոց 'ի Կոստանդինուպոլսոյ։ Յետ այնորիկ գրեաց Թէոդորոս Պատրիարք գիր ազաչանաց առ Կուսակալն, առ երկրորդ Նորին և առ այլ կարեւոր անձինս, պատրաստեալ իւրաքանչիւրոց զարժանաւոր ընծայս, և յանձն արար վարդապետաց։ Ետ նաեւ զպատմէն հրովարտակին և մեկնեցան յԵրուսաղէմէ ('ի 23 Յուլիսի)։ Ուղեկցութեամբ երկուց զինուորաց և սուրհանդակին, ճանապարհ արարեալ սոցա հասին 'ի վերջին Իջեւանս Սաղսաղա կոչեցեալ, և մինչ պատրաստէին ելանել անտի՝ ահա եկեալ մտին 'ի նոյն Իջեւան Յովհաքեանն և Ճարտարապետն իւրովք հանդերձ՝ և զարմացեալ ողջունեցին ըզնոսա, և 'ի հարցանել զպատճառ ճանապարհի նոցա, ասէ Յովհաքեանն՝ Բդեշխն չունի հաճութիւն կատարել զգործն Հայոց, որոյ վասն աճապարեմ 'ի Կոստանդինուպոլիս ծանուցանել զիրսն Արքայի։ Իսկ Ճարտարապետն առանձին եցոյց նոցա չհաւատալ կեղծ բանից Նորին, զի առաջի Բդեշխին արդարացոյց զՅոյնս, և Նորա առեալ դաղտ 'ի Յունաց 5000 դահեկան և յայտնապէս ետ ցնա իբր չնորհ ինչ 'ի կողմանէ իւրմէ։ Լուեալ զայս Վարդապետաց գրեցին գիր առ Ադամ Գալֆայն և առ ընկերս Նորին՝ փութալ հասանիլ 'ի Կոստանդինուպոլիս չմնալ ուխտաւորաց։ զի Բդեշխն 'ի բանից Յունաց ճգեալ է զգործն 'ի Գուն, եւ զմեզ կամի նեղել, եւ զայս գիր չյայտնել ումեք, (1813։ 'ի 29 Յուլիսի, ժամ 7 գիշեր)։ զայս գիր եառն Ճարտարապետին հասուցանել նոցա յԱքքէ, և կամ ուր և պատահեսցին։

Թէպէտ վարդապետքն կամէին դառնալ յԵրուսաղէմ, այլ երկեան 'ի Բդեշխէն և 'ի զօրացն, և 'ի նմին աւուր ելեալ անտի մտին 'ի Դամասկոս եւ օթեւանս կալան 'ի վանս Հայոց Ս։ Սարգսի եւ զգալուստ իւրեանց ազդ արարին կիւչիւք Յարութիւն դանձապետին, և 'ի վաղիւն չոքան առ Բեահէայ Պէյն և մատուցին զգրեանս, և Նորա 'ի վերին երեսս սիրով ընկալեալ զնոսա հարցանէր զողջունէ Պատրիարքին և ծերունեաց, ապա եհարց զգործոյն, եւ նոքա պատմեցին զեղելոյն, և զանկատարսն ըստ մտաց հրովարտակին եւ դատին։ Դուք ասէ յԵրուսաղէմ երկուս կերպ սակարկութիւնս արարիք ընդ Մէհէմմէտ Պէյին,